

Ղլիճ՝ կետուկ միշտ աւազակաց վայր եղած է. այդ տեղ պատահած մի դէպք միշտ կը պատմուի ի Բագրևանդ եւն. վայրեր, հետեւեալ կերպով .

### Գ Ե Ր Ա Ն Լ Խ Ա Յ Խ Պ Ա Է

— Խղէն յինք Մանձկերտու Գերանլիայ 1 դեղէն ու կարճ կտրիճ մարդ մը կեղնի, յաւուր մէկին ուրանց յօտէն ձմրան վախտին կտրիճի զրոյցք կենէն (կանէին). ջահէլին մէկ դառնայ կըսայ Խղէին — Ե լէ քղի խտըր (չափ) կտրիճ իմ :

Խղէն ուր միտք կը պայա. կը մնայ չուրի ամառ :

Ամրան ա՛ եռսուն էրկու Փախի (սարկաւագ) ձեռք զարկեցին գողութենի. Ղլիճ — կետուկ բռնած էն՝ ընցնող դարձողին կը թաշնէն. Խղէն էդ «կտրիճ իմ» ըսող մարդուն կըսայ. — Մանուկ, էրթտըք. էդ գողեր բէալքի մի բռնինք :

Խղէն ու էդ քու Մանուկ ասած կընկնին ճանբախ կիգան Հէարի Ղլիճ — կետուկ, դարի մի կող՝ վըր յաղըրի մի կը նստին. էրկուս լէ դէս ու դէն կիշկին, կը տեսնին հանգա՛ էն ձորէն դուս կը յեղնին Փախիք, կիգան վըր ընդոնց :

Խղէն կըսայ .

— Մանուկ, խոչաղութենի փախի՞ն ա, դը՛ յէլի :

Մանուկ կերթայ էդ Փախիքներու յօտեջ. Փախիք էդօր կը բռնին, թաշնին, կենին յուհու ըռութ :

Խղէի ձեռ կարճ դայլոն մի կեղնի, դայլոն կը վառայ, ուր

---

ընէի ըբանեղձ եղողներու համար պատրաստուած կը լինին. քանի այսպիսի տեղեր եւս կը տեսնուին դերեզմաններ, որ շեհիտներ (նահատակ) կատուին՝ թերեւս տքա նահատակուած լինին ըբանեղձներն՝ ազատելու բարեգործութեան ծանապարհի մէջ: Այժմ՝ հայուն բարի յատկութիւններէ մին եւս այս է. երբ լսեց թէ մէկն ըբարգել եղած է, իւր անձ վտանգի մատնելով ըբարգելն պիտի ազատէ:

1, Գերանլի նորատինայ եւ Տիւլնուկայ միջակայքն է, 1  $\frac{1}{2}$ , ժամ Մուրատ գետի արեւմուտքն, 1  $\frac{1}{2}$ , ժամ եւս ի հիւսիս նորատինայ. 1 ժամ Տիւլնուկայ արեւմուտքն՝ այժմ 3 տուն հայ կայ: